

ԱՊՐԲԵԶԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԿՏԻՎԻՍՏԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

352(-22)

Գ-68

ՍՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԵՐԵՎԱՆ — 1929

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

22) 48
68

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԿՏԻՎԻՍՏԻ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՊԼԵՆՈՒՄԸ. ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԸՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ. ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԸՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ՍԵԿ-
ՑԻԱՆԵՐԸ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԻՑ ԱՊԱՀՈ-
ՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ-
ՆԵՐ. ԽՈՐՀԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՏԳԱՄԱ-
ՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ. ԿԱՆՈՆԱ-
ԴՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԻՑ
ՈՒԵՎԻԶԻՈՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱ-
ՍԻՆ. ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԱՇԽԱՏԵՆ ՍԵԿՑԻԱ-
ՆԵՐԸ

Հրատարակություն
Ա.ԴԻԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԱՐԺՆԻ
Բազու — 1929

I.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՊԼԵՆՈՒՄԸ

1. Գյուղական խորհրդի նստաշրջանը ընտրական հանձնաժողովի նախագահը հրավիրում է այն ժամկետին, վոր սահմանված է վերընտրությունների պլանով:

2. Առաջին պլենումը գյուղխորհրդի ընթացիկ աշխատանքները տանելու համար ընտրում է նախագահություն և գյուղական խորհրդի նախագահ:

3. Գյուղական խորհուրդը պիտի ունենա կանոնավոր նիստեր և առնվազն ամիսը մեկ անգամից վոչ պակաս:

Հերթից դուրս գյուղխորհրդի նիստեր կարելի չէ հրավիրել գյուղխորհրդի նախագահի նախաձեռնությամբ (инициатива) կամ վերադաս գործկոմիների առաջարկությամբ կամ գյուղական խորհրդի անդամների ընդհանուր թվի $\frac{1}{3}$ պահանջով:

Ծանոթություն. Գյուղական խորհուրդի նիստերը որինավոր են համարվում, չեթե խորհրդի անդամների կեսից (50%) վոչ պակաս ներկա են: Ժողովն իրական լինելու համար, չեթե չկա կվորում, այսինքն անդամների թիվը քիչ է, խորհրդի յերկրորդ նիստը համարվում է կալացած՝ քանի անգամ ել վոր ներկա լինեն:

Բոլոր հարցերը գյուղական խորհուրդի նիստերում վորոշվում է հասարակ ձայների մեծամասնությամբ:

4. Գյուղական խորհրդի նիստերին գյուղխորհրդի անդամներն ոգտվում են վճռական ձայնի իրավունքով:

5. Գյուղական խորհրդի նիստերը լինում են հրապարակորեն և այդ նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել գյուղական, խորհրդային, հասարակական կազմակերպությունների և հիմնարկությունների ներկայացուցիչները, նույնպես և կանանց պատգամավորական ժողովի ներկայացուցիչները և հավասար չափով բոլոր այն քաղաքացիները, վորոնք ոգտվում են ընտրական ձայնի իրավունքով:

Ծանոթություն. Այն հարցերի քննարկումը, վորոնք չի կարելի հրապարակորեն քննարկել, գյուղխորհրդի վորոշմամբ նիստը հայտարարվում է փակված:

6. Գյուղական խորհրդի բացառիկ կոմպետենցիայի մեջ մտնում են հետևյալ հարցերը.

Гостипография „Красный Восток“
БАКПОЛИГРАФА БСНХ,
Баку, Карантинная, № 84.
Главлит № 5913. Заказ № 514.
Тираж—1000 экземпляров.



806557

ա) խորհուրդների ռալոնական համագումարների համար պատգամավորների ընտրումը.

բ) կազմում է գյուղխորհրդի բյուջեն կամ գյուղխորհուրդի յեկքի և մուտքի նախահաշիվը, նույնպես և հաշվետվություններ նրանց կատարման մասին.

գ) ընտրում է գյուղխորհրդի նախագահություն և նախագահ.

դ) կազմակերպում է գյուղխորհրդի սեկցիաները և աշխատանքի բաժանում է կատարում նրանց միջև. գյուղխորհրդի անդամներին բաժանում է ըստ սեկցիաների և հաստատում է սեկցիաների նախագահներին.

յ) ռալոնական գործադիր կոմիտեին տալիս է իր յեզրակացությունը, թե ռալոնի և թե իր բյուջեով պահվող կուլտուրկրթական, բուժական և բուժապրոֆիլակտիկ հիմնարկությունների ցանցը սահմանելու հարցի վերաբերյալ:

7. Բացի այն հարցերից, վորոնք նախատեսված էին վերը նշված հոդվածներում, գյուղական խորհուրդներն իրենց պլենար նիստերում, ինչպես իրենց նախաձեռնություններ, նույնպես և վերադաս գործադիր կոմիտեների առաջարկությամբ, կարող են քննարկել այն հարցերը, վորոնք գյուղխորհրդի նախագահությունն անհրաժեշտ է գտնում մոցնել պլենումների նիստերի քննարկությունը:

8. Գյուղական խորհուրդները և գյուղական խորհրդի անդամները իրենց ընտրողներին ղեկուցում են տալիս կատարած աշխատանքների մասին տարեկան մեկ անգամից վոչ ավելի:

II.

ԳՅՈՒՂԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

1. Գյուղական խորհրդի վարչական բոլոր ձուլերում ընթացիկ աշխատանքները տանելու և գյուղխորհրդի սեկցիաների գործունեություն ղեկավարելու համար՝ գյուղական խորհուրդն իր կազմից ընտրում է նախագահություն 3 հոգուց վոչ պակաս և 7 հոգուց վոչ ավելի, վորոնց թվում նաև գյուղխորհրդի նախագահը և յեկկու թեկնածու:

Ծանոթութուն. Գյուղական խորհրդի քարտուղարը կարող է նշանակվել նաև վոչ գյուղխորհրդի անդամ. սակայն նա անպայման պետք է ունենա ընտրական ձայնի իրավունք:

2. Գյուղական խորհրդի նիստի հրավիրվում է շաբաթը մեկ անգամից վոչ ավելի:

3. Գյուղական խորհրդի նախագահությունն արձանագրությունները ստորագրում են նախագահը և քարտուղարը, արձանագրության մեկ ուրինակը ուղարկվում է ռալոնական գործադիր կոմիտեին:

4. Նախագահությունն նիստերում բոլոր հարցերը լուծվում են բաց քվեարկությամբ հասարակ ձայների մեծամասնությամբ:

5. Գյուղական խորհրդի նիստերի ընդհատումների ժամանակամիջոցում գյուղական խորհրդի նախագահությունը հանդիսանում է իշխանության գերագույն մարմինը գյուղական խորհրդի տեղիտորեայի վրա և ոգտվում է գյուղխորհրդի պլենումի բոլոր իրավունքներով, բացի այն իրավունքներից, վորոնք բացառապես մտնում են գյուղխորհրդի պլենումի կոմպետենցիայի մեջ:

III.

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Գյուղական խորհրդի նախագահը կյանքում կիրառում է գյուղական խորհրդի բոլոր վորոշումները և կարգադրությունները. նախագահում է գյուղական խորհրդի պլենումին ու նախագահության նիստերին և ղեկավարում է գյուղական խորհրդի տեխնիկական ապարատի աշխատանքները:

2. Բացառիկ դեպքերում, նախագահությունն նիստերի ընդհատումների ժամանակամիջոցում, գյուղական խորհրդի նախագահն իրավունք ունի կարգադրություններ անելու և միջոցներ ձեռք առնելու այն գործերի նկատմամբ, վորոնք մտնում են գյուղական խորհրդի նախագահության կոմպետենցիայի մեջ, բացառությամբ հետևյալի.

ա) վերադաս գործկոմիտեի պարտադիր վորոշումների խախտման համար վարչական միջոցների գործադրություն.

բ) ազգաբնակչությանը տարերային աղետների դեմ պայքարելու համար՝ աշխատանքային և ճանապարհների շինարարության պարտիքի (ПОВИННОСТЬ) կարգով ներգրավելը.

գ) գյուղական խորհրդի անդամների նկատմամբ դիսցիպլինար միջոցների գործադրելը.

դ) վերադաս գործադիր կոմիտեներին այս կամ այն հարցի նկատմամբ յեզրակացություններ տալը.

յ) գյուղմիասուրբի և պետական ապահովագրության դրույքների (ОКЛАДЫ) արտոնությունները բաշխելը.

զ) հողային համայնքների վորոշումների հաստատելը.

ե) տան անդամների միջև բաժանման ակտերի բեզլիստրացիան և տան կազմի փոփոխման հաստատելը.

ը) պայմանագրով հողերը կապալով տալը:

3. Գյուղական խորհրդի նախագահն իր բոլոր առանձին կարգադրությունների և ձեռք առած միջոցների մասին՝ մոտակա նիստերից մեկում հայտնում և գյուղական խորհրդի նախագահությանն ի գիտություն:

4. Գյուղական խորհրդի նախագահն իր բոլոր կարգադրությունները կարող են փոխվել գյուղական խորհրդի նախագահության կողմից: Գյուղական խորհրդի նախագահը նախագահության վերջին մասն հետ համաձայն չլինելու դեպքում, հարցը վերջնականապես լուծելու համար դնում և գյուղական խորհրդի պլենումի նիստին—չկանգնեցնելով գյուղական խորհրդի նախագահության վերջումը կյանքի մեջ անցկացնելը:

5. Գյուղական խորհրդի նախագահն իր պաշտոնից հեռանալու դեպքում, պլենումը իր արտակարգ նիստում ընտրում և նոր նախագահ:

IV.

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴԻ ՍԵՎՑԻԱՆԵՐԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Գյուղացիներին, գեղջկուհիներին, բաղրակներին, բաղրակուհիներին, բանվորներին, գյուղական աշխատավոր ինտելիգենցիային գյուղական խորհուրդների գործնական աշխատանքների մեջ ներգրավելու, գյուղի չքավորների և միջակների միջև մշտական կապ ստեղծելու, նրանց շարքերից հասարակական և խորհրդային աշխատանքների համար ակտիվ առաջ քաշելու, խորհրդային ապարարտը ազգաբնակչության և նրա կարիքներին մոտեցնելու նպատակով, նույնպես և գյուղական խորհրդի գործունեությունը զանազան ճյուղերի հարցերը նախորդ մշակելու համար գյուղական խորհուրդներին կից կազմվում են սեկցիաներ:

ա) գյուղատնտեսական և կոոպերատիվային.

բ) կուլտուր-կրթական և բարեկարգման (благоустройство).

գ) ֆինանսա-բյուջետային.

դ) կենցաղային.

յե) Բ.-Գ. Տ. (РКИ).

Ծանոթություն. Բացի սույն հոդվածում թված սեկցիաներից, գյուղխորհուրդը ռալոնական գործադիր կոմիտեի թույլտվությամբ կարող է կազմել նաև ուրիշ սեկցիաներ, յեթե ըստ աշխատանքի պայմանների անհրաժեշտ է գտնում:

2. Գյուղխորհուրդների բոլոր անդամները և նրանց թեկնա-

ծուները պարտավոր են ամենաքիչը մեկ սեկցիայի մեջ լինել, ըստ իրենց ընտրություն, վորոնք գյուղխորհրդի վերջին մասն հաստատվում են ըստ սեկցիաների:

3. Բացի գյուղխորհրդի անդամներից և թեկնածուներից սեկցիաների մեջ կամավոր կերպով մտնելու կարգով ներգրավվում են.

ա) գյուղացիներ և գեղջկուհիներ, բաղրակներ և բաղրակուհիներ, վորոնք իրենց ցույց են տվել խորհրդային և հասարակական աշխատանքների ասպարեզում.

բ) ֆարգավորների և տեղական կոմիտեների ներկայացուցիչները, նույնպես և Աղրկումկուսի (բ) և ՀԼԿՑԵՄ համապատասխան բջիջների ներկայացուցիչները.

գ) պրոֆմիության տեղական բաժանմունքների ներկայացուցիչները և պրոֆմիության անդամները.

դ) գյուղփոխգլխների անդամները.

յե) ուրիշ հասարակական, կոոպերատիվային և տնտեսական կազմակերպությունների աշխատավորները.

զ) կանանց պատգամավորական ժողովների պատվիրակուհիները.

ե) գյուղական աշխատավորական ինտելիգենցիան (բժիշկներ, ուսուցիչներ, գյուղատնտեսներ և այլն), նույնպես և այլ քաղաքացիներ, վորոնք չեն զրկված ձայնի իրավունքներից:

4. Առանձին սեկցիաների անձնական կազմը հաստատվում և գյուղական խորհուրդը, ընդ վորում սեկցիայի քանակական կազմը ամեն մի առանձին դեպքում սահմանվում և գյուղխորհրդի կողմից:

5. Սեկցիան իր աշխատանքները ղեկավարելու համար իր կազմից ընտրում է 3 հոգուց բաղկացած մի բյուրո, վորոնց թվում նաև նախագահ գյուղխորհուրդի անդամներից, և քարտուղար (առանձին դեպքերում սեկցիաների բյուրոյի նախագահ նաև սեկցիայի անդամ), վորը չի հանդիսանում գյուղական խորհրդի անդամ: Բյուրոյի կազմը հաստատվում և գյուղական խորհուրդը:

Բյուրոյի անդամների մեջ մտնում են.

ա) սեկցիաների նիստերի ժամկետների և նրանց ընթացիկ աշխատանքի կարգի սահմանումը՝ վորը հաստատված և գյուղխորհրդի կողմից.

բ) սեկցիայի նիստերը կանոնավոր հրավիրելը.

դ) հարցերի կարգը մշակելը, վորոնք դրվելու են սեկցիայի նիստերին.

դ) աշխատանքների բաժանումը սեկցիայի անդամների միջև և նրանց վրա դրված պարտականությունների կատարման վրա հսկելը.

յե) սեկցիայի անդամների հաշվետվումը, նույնպես և նրանց աշխատանքների մեջ ներգրավելը և նիստերին կանոնավոր կերպով հաճախելու վրա հսկելը.

զ) ամրացրվածների վրա հսկելը:

Բյուրոյի անդամներից մեկի վրա դրվում է սեկցիայի նիստերի արձանագրություններ կազմելը:

6. Յեթե սեկցիայի անդամը չերեք անգամ շարունակ չի հաճախում սեկցիայի նիստերին առանց հարգելի պատճառների և իրեն տրված հանձնարարությունները չի կատարում—հեռացնվում է սեկցիայի կազմից:

Այդ հեռացումը լինում է սեկցիայի վորոշմամբ:

7. Սեկցիայի նախագահը, քարտուղարը և մյուս անդամները սեկցիայի աշխատանքներին մասնակցելու համար վոչ մի վարձատրություն չեն ստանում:

ՍԵԿՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

8. Սեկցիան, իր գործունեություն մեջ հանդիսանալով գյուղխորհրդի հարակից (подсобный) մարմինը, խորհրդի առաջադրությամբ կամ իր նախաձեռնությամբ մշակում է հարցեր և տալիս է իր յեզրակացությունը:

Սեկցիայի անելիքներն իր աշխատանքների ընթացքում.

ա) լսում են գյուղխորհրդի գերատեսչության յենթակա հիմնարկությունների և ձեռնարկությունների և խորհրդի աշխատանքների համապատասխան ճյուղերի ղեկուցումները և հաշվետվությունները:

Գյուղխորհրդի հանձնարարությամբ հետազոտում է հասարակական նշանակություն ունեցող և գյուղացիության կարիքները սպասարկող հիմնարկությունները և ձեռնարկությունները, ղեկուցումների, հաշվետվությունների և հետազոտությունների վերաբերմամբ տալիս է իրեն յեզրակացությունները և գործնական առաջարկությունները.

բ) վերամշակում, վերահսկում և նախորոք քննարկում է գյուղխորհուրդների վորոշումների նախագիծը, մատնանշում և նախապատրաստում է նրանց անցկացնելու հարցերը.

գ) որենսդրական նախաձեռնություն և հայտնաբերում և գործնականորեն մասնակցում է իրենց գործունեության մեջ մտնող հարցերի վերամշակման աշխատանքներին.

դ) աշակցում է գյուղխորհրդի տերիտորիայի վրա գտնվող բոլոր հիմնարկությունների և կազմակերպությունների նյութականորեն ուժեղանալուն և կազմակերպչորեն ամրանալուն.

յե) գյուղխորհրդի հանձնարարությամբ իրեն անդամների միջև կատարում է գյուղխորհրդի հսկողության տակ գտնվող հիմնարկությունների և ձեռնարկությունների, գործունեության վրա հսկելու պարտականությունները՝ կցելով իր անդամները հիմնարկություններին և ձեռնարկություններին.

զ) մասնակցում է գյուղխորհրդի աշխատանքների պլանը մշակելու մեջ և հետևում է նրանց կատարման վրա իրենց հսկողության սահմաններում.

ե) նախորոք վերաքննում և քննարկում է բոլոր հարցերը, նույնպես և ղեկուցումները, հաշվետվությունները, նախագիծերը, վորոնք գյուղխորհուրդը ուղարկում է իշխանության վերադաս մարմիններին ի հաստատումն.

ը) անմիջական կապ է ստեղծում և ծանոթանում հարևան գյուղերի սեկցիաների աշխատանքների ընթացքի հետ.

թ) վորոշում և հայտնաբերում է առաջ քաշված աշխատակիցների՝ գյուղացիների աշխատունակությունը և եներգիան վորոնց աշխատանքի պրոցեսը անցել է նրանց աչքի առաջ:

ժ) պայքար է մղում բյուրոկրատիզմի, քաշքշումների, կաշառակերության, խուլիզանության, վատնումների և անտնտեսավարության դեմ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելով գյուղխորհրդի միջոցով.

ի) պարբերաբար իր ղեկուցումներն է դնում գյուղխորհրդի նիստերին և չերեք ամիսը մի անգամից վոչ պակաս հաշվետվություն է տալիս խորհրդին իր կատարած աշխատանքների մասին:

9. Սեկցիայի կողմից մշակված ձեռնարկումները և ընդունած վորոշումները մտցնում է գյուղխորհրդի նիստերը՝ վերանայելու և հաստատելու համար և հաստատելուց հետո գյուղխորհուրդը կիրառում է կյանքում:

Ծանոթություն. Այն ձեռնարկումները, վորոնք մշակել է սեկցիան, բայց գյուղխորհրդի հսկողության չի յենթակա, ներկայացնում են իշխանության համապատասխան մարմիններին ի հաստատություն:

10. Սեկցիան իրավունք չունի խառնվելու, ինչպես գյուղացիների, նույնպես և գյուղի մյուս կազմակերպությունների ու հիմնարկությունների անմիջական աշխատանքների մեջ:

11. Սեկցիայի նիստերը հրավիրվում են ամիսը մեկ անգամից վոչ պակաս և հավաքվում են սեկցիայի բոլորի կամ գյուղական խորհրդի առաջարկությամբ: Սեկցիայի նիստերը համարվում են կայացած, չեթե սեկցիայի անդամների կեսից ավելին ներկա չեն: Սեկցիայի բոլոր անդամները (հոգ. 2 և 3) ոգտվում են մեծական ձայնի իրավունքով:

12. Սեկցիայի նիստերը տեղի չեն ունենում հրապարակավորեն: Նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներկա լինել բոլոր քաղաքացիները, վորոնք ոգտվում են ընտրական ձայնի իրավունքով:

13. Սեկցիայի ամեն մի նիստի համար կազմվում է արձանագրություն, վոցի մեջ մտցնվում է սեկցիայի բոլոր վորոշումները: Արձանագրությունը ստորագրում են սեկցիայի նախագահը և քարտուղարը:

14. Սեկցիան մշակում է իր աշխատանքների մանրամասն և ոյալ իրագործելի աշխատանքի պլանը՝ համաձայնեցրած գյուղխորհրդի աշխատանքների պլանի հետ և այդպիսին ներկայացնում է գյուղխորհրդին ի հաստատություն:

15. Այն դեպքում, յերբ սեկցիաների կողմից մշակվելիք հարցերը կապված են ուրիշ սեկցիաների աշխատանքների հետ, գյուղխորհրդի կամ այդ սեկցիաների վորեւ մեկի նախագահի առաջարկությամբ հրավիրվում է նշած սեկցիաների միացյալ նիստը:

16. Սեկցիան իր աշխատանքների ընթացքում ոգտվում է գյուղխորհրդի տպարատից:

17. Յերեք ամիսը մեկ անգամից վոչ պակաս գյուղխորհրդին հաշվետվություն է տալիս իր կատարած աշխատանքների մասին:

18. Բոլոր սեկցիաների ընդհանուր ղեկավարությունը, նրանց գործունեություն միացնելը և համաձայնեցնելը պատկանում է գյուղխորհրդին:

ՍԵԿՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

19. Սեկցիայի ամեն մի անգամ պետք է՝

ա) կատարի իրեն վրա դրված բոլոր պարտականությունները սեկցիայի աշխատանքի նկատմամբ:

բ) կանոնավոր կերպով հաճախի սեկցիայի նիստերը և կարիք յեղած դեպքում կամ թե ազգաբնակչության պահանջմամբ ինֆորմացիա տա իր աշխատանքի մասին:

20. Սեկցիայի ամեն մի անգամ իրավունք ունի բացատրություն պահանջել նախագահից և քարտուղարից նրանց արարքների մասին, սակայն չխառնվել նրանց կարգադրությունների մեջ:

21. Սեկցիայի ամեն մի անգամ իրավունք ունի ներկա լինել գյուղխորհրդի նախագահի կամ քարտուղարի պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ:

22. Սեկցիայի ամեն մի անգամ իրավունք ունի անխտիր հաճախելու գյուղական բոլոր հիմնարկություններն ու կազմակերպությունները, ծանոթանալ նրանց աշխատանքների հետ, սակայն չխառնվել նրանց ոպերատտիվ գործունեություն մեջ, նույնպես և պահանջել ամեն մի տեսակ տեղեկանք և բացատրություն—բացառությամբ զադտնիքների:

ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

23. Գյուղացեստական յեվ կոոպերատիվային սեկցիան իր առաջ խնդիր է դնում ամեն կերպ բարելավել գյուղական տնտեսությունը և աջակցել այն կազմակերպություններին, վորոնք գյուղում աշխատանքներ են տանում՝ կոլտնտեսություններ կազմակերպելու, գյուղատնտեսական և անասնաբուժական կետեր բանալու, գյուղական տնտեսության մեքենայացման, հողը կատարելագործված ձևով մշակելու, հողաշինարարություն անցկացնելու, չքավորության ոգնություն կազմակերպելու, չքավոր և միջակային տնտեսությունները վարկավորելու, անասնաբուծության զարգացման, անասունների ցեղն ազնվացնելու և սպառողական, գյուղատնտեսական, տնայնագործական և արդյունաբերական կոոպերացիան զարգացնելու գծով և այլն:

Գյուղատնտեսական և կոոպերատիվ սեկցիայի անելիքները.

ա) մշակում է միջոցներ, վորոնք աջակցում են գյուղացիներին անցնել հողից ոգտվելու բարելավված ձևերին.

բ) հարցեր է մշակում հողերի կանոնավոր ոգտագործման, բերքի հավաքման, ցանքսերի պահպանման և վնասատուների դեմ պայքարելու համ. բ.

դ) պլան ե մշակում և աշխատանքային և գործաշուկային համար և հսկում ե այդ կամպանիան անցկացնելու վրա.

դ) կազմակերպում և հսկում ե սերմացուի բարելավման և մաքրման վրա.

յե) միջոցներ ե ձեռք առնում խոտհարքները, բանջարանոցները, այգիները և այլ տեսակի գյուղական տնտեսությունը բարելավելու համար:

զ) անասնաբուժությունը բարելավելու բնագավառում ձեռնարկումներ ե մշակում և աջակցում ե ձիաների զուգավորման (случка) կազմակերպելու աշխատանքներին.

ե) աջակցում ե անասնաբուժական միջոցներ անցկացնելուն, անասունների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելուն, անասունների համար կանխարգելիչ պատվաստումներ (прививка) անցկացնելուն, անասունների համար գերեզման հատկացնելուն և այլն.

ը) աջակցում ե հողաշինարարության աշխատանքներին, ազգաբնակչության վերագաղթին և տեղավորմանը. մշակում ե հողաբաժանման և հավասարեցման հարցերը և թույլ չի տալիս ապրելի հողաբաժանումը.

թ) տալիս ե իր յեզրակացությունը հողերի վեճերի վերաբերյալ, վորը առաջանում ե առանձին քաղաքացիների միջև.

ժ) մասնակցում ե ագրոկետերի աշխատանքների պլանը կազմելուն և հսկում ե նրանց կատարման վրա.

ի) կազմակերպում ե ագրոնոմիական անձնակազմի (персонал) շրջագայութը (поездки) և ագրոնոմիական հետ գյուղատնտեսական հարցերի վերաբերյալ զրույցներ անցկացնելը.

լ) հսկում ե գյուղացիությունը գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ մատակարարելու վրա և սահմանում ե գյուղատնտեսական գործիքներից ոգտվելու կարգը, վորոնք բաց են թողնվում վարձակետերից.

խ) ուսումնասիրում և մասնակցում ե գյուղատնտեսական միջոցների հայթայթման համար ձեռնարկումներ մշակելուն և արտագրական կետեր կազմակերպելուն.

ծ) մասնակցում ե գյուղատնտեսական միություններին, կոլեկտիվ և բանջարանոցային տնտեսությունների, արտերի և ընկերությունների կազմակերպչական աշխատանքներին.

կ) ուսումնասիրում ե գյուղատնտեսական միացումների ֆինանսավորման հարցերը.

հ) կենսագործում ե վարկերն իր ժամանակին բաց թողնե-

ու վրա վերահսկողությունը և իր ժամանակին գյուղացիների կողմից ստացած պարտքերի հանգցման (погашение) և ըստ իրենց նշանակման ոգտագործման վրա.

ձ) հսկում ե տեղական նշանակություն ունեցող անտառների ֆոնդից գյուղացիներին անտառ բաց թողնելու վրա և աջակցում ե անտառը ապրելի ձևով կոտորելու դեմ տարած պայքարին.

դ) հսկում ե կոոպերատիվային կազմակերպությունների աշխատանքների պլանն անցկացնելու վրա և աջակցում ե այդպիսին կյանքում անցկացնելուն.

ճ) մշակում ե ձեռնարկումներ, վորոնք հղված են եժանացման և կոոպերատիվային կազմակերպությունները սպառողների կարիքներին և պահանջներին հարմարացնելու համար.

մ) քննում ե բողոքները և սպառողների հարցումները առևտրական ապարատի վերաբերյալ, բողոքների մատյանի առկայությունը և իր ժամանակին բողոքների վերաբերյալ պատասխաններ տալը.

յ) զբաղվում ե սպառողների պահանջների հաշվետվումով և միջոցներ ե մշակում այդպիսին բավարարելու համար.

ն) ստուգում ե կոոպերացիայի առաջի անհրաժեշտության ապրանքներով մատակարարելու կարգը և խանութային հանձնաժողովների մասնակցությունը կոոպերատիվի աշխատանքների մեջ.

շ) հսկում ե ջրի կանոնավոր բաշխման և ջրհորների կանոնավոր դրությունը վրա.

ո) աջակցում ե ցանքսերի, շենքերի, անասունների ապահովագրման գործի զարգացմանը և այլն.

չ) աջակցում ե աշխատանքի մարմիններին բատրակություն հայտնաբերելու հարցում և հսկում ե բատրակների և վարձողների միջև կնքված պայմանագրի ճշտորեն կատարման վրա:

24. Կուլս-կրթական յեվ բարեկարգման սեկցիան իր առջև դնում ե հետևյալ խնդիրները. բարձրացնել գյուղի աշխատավորության կուլտուրական մակարդակը, պայքարել տղիտություն և գոհություն, հին կենցաղի մնացորդների դեմ և աջակցել լուսավորության և առողջապահության մարմիններին, դպրոցական ցանցի, ակումբների, զբոսարանների, խրճիթ-ընթերցարանների, անգրագիտությունը վերացնելու կայանների ցանցի լայնացման գործում. աջակցել ընդհանուր սկզբնական ուսումը անցկացնելու վրա և ազգաբնակչությանը բժշկական ոգնությունը ապահովե-

լու, վարակիչ ու սոցիալական հիվանդութիւններէ դեմ պայքարելու և գյուղի բարեկարգման ու սանիտարական խնդիրները անցկացնելու գործում:

Կուլտուր կրթական և բարեկարգման սեկցիայի անելիքները.

ա) մշակում և քննարկում ե գալըցները բանալու, նրանց նորմալ աշխատանքներէ, խրճիթ-ընթերցարաններէ, կարմիր անկշուններէ, լիկկայաններէ ձեռնարկումները և այլն.

բ) աջակցում ե նշած կազմակերպութիւններին և հիմնարկութիւններին գրեւական պիտուէքներով, դպրոցական ինվենտարով, վառելիքով ապահովելուն.

գ) հայտնաբերում և հաշվեառում ե կատարո մ անգրագիտների և նրանց ներգրավում ե լիկկայանները.

դ) միջոցներ ե ձեռք առնում գլուգում գրքեր, լրագրներ և ժուրնալներ տարածելու համար, նույնպես և զեկուցումներ, դասախոսութիւններ ու գրուցներ կազմակերպելու նպատակով.

յ) ձեռնարկումներ ե մշակում յերեխաների անապատտանութիւն դեմ պայքարելու համար. մասնակցում ե անապատտաններէ հաշվեառման և նրանց համար համապատասխան հիմնարկութիւններ կազմակերպելու գործին.

ը) հարց ե բարձրացնում և պաշտպանում ե հասարակութիւն նախաձեռնութիւնը դպրոցական և ուրիշ կուլտուր-սոցիալական (հիվանդանոցներէ, հասարակական կառուցվածքներէ) շինարարութիւն գործում—ինքնատուրքավորման միջոցով. հըսկում ե բաշխման վրա և հետեում ե, վորպեսզի իր ժամանակին մտցնեն ինքնատուրքավորման գումարները ալդ նպատակի համար.

ե) աջակցում ե գյուղթղթակիցների շարժմանն ու զարգացմանը և միջոցներ ե ձեռք առնում նրանց հալածման դեմ պայքարելու համար.

զ) քննարկում ե հիվանդանոցներ, ամբուլատորիաներ, բրժշկակետեր և այլ կազմակերպելու հարցերը, նրանց նորմալ աշխատանքի ընթացքը, շէնքերի կանոնավոր գրութիւն հարցը և այլն.

թ) ուսումնասիրում ե բուժական հիմնարկութիւնների բեռնավորումը (нагрузка), հիվանդների ընդունելութիւն կարգը և այլն.

ժ) ուսումնասիրում ե բուժական հիմնարկութիւն տնտեսական մասի աշխատանքները, և բուժական անձնակազմի վերաբերմունքը դեպի հիվանդները.

ի) մասնակցում և միջոցներ ե ձեռք առնում գյուղի հակասանիտարական գրութիւն դեմ պայքարելու և նրա առողջացման համար (փողոցները, ոգովելու ընդհանուր վաչրերը, աղբյուրները, ջրհորները և այլ) մաքուր պահելը.

ի) հսկում ե գոյութիւն ունեցող կամուրջները, ճանապարհները կանոնավոր գրութիւն մեջ պահելու համար և նախաձեռնութիւն ե հարուցում նոր կառուցումներ անցկացնելու համար.

լ) հսկում ե հակահրդեհային միջոցներ կազմակերպելու և կրակադիմացիւն շինարարութիւն համար.

25. Ֆինանսա-բյուջետային սեկցիան իր առջև խնդիր ե դնում նախորդ մշակել ու լուծել գյուղական խորհրդի գործունեյութիւն մեջ մտնող բոլոր ֆինանսական հարցերը.

Ֆինանսա-բյուջետային սեկցիայի անելիքներն են.

ա) մասնակցում ե հարկալին մարմինների աշխատանքների մեջ և աջակցում ե տուրքավորման կամպանիան անցկացնելուն.

բ) աջակցում ե տուրքերի հավաքմանը, տուրքավորման յեթական որչեկտների հայտնաբերմանը և պետապահովագրութիւն և տուրքատուների կանոնավոր ցուցակ կազմելուն.

գ) աջակցում ե տուրքային արտոնութիւնները կանոնավոր և իր ժամանակին գործադրելուն.

դ) լսում և քննարկում ե գլուղական կազմակերպութիւնների և հիմնարկութիւններէ—վորոնք պահվում են տեղական բյուջեյով—զեկուցումները և ուկիդիոն հանձնաժողովի հետ միասին հետազոտում ե նախահաշվալին հատկացումները ճիշտ ծախսելու վրա.

յ) աջակցում ե պետական փոխառութիւնը տարածելու աշխատանքներին.

զ) աջակցում ե խնայողական դրամարկղի և գյուղատնտեսական վարկային կոոպերատիվի զարգացմանը:

26. Կենցաղային սեկցան իր առջև խնդիր ե դնում—վերացնել կենցաղային հանցանքները, բարեւալել աշխատանքի և կենցաղի պայմանները կանանց ազատագրման հետագա աշխատանքներում և նրանց ներգրավում ե պետական շինարարութիւն աշխատանքների մեջ:

Կենցաղային սեկցիաների անելիքները.

ա) մշակում ե ձեռնարկումներ, վորոնց նպատակն ե վերացնել կանանց տնտեսական և իրավական անհավասարութիւն-

ները (պայքարել բազմակնություն, փրկանքի (калым), կանանց փախցնելու, փոքրահասակների ամուսնացնելու դեմ և այլն)։

բ) մշակում է կանանց ընտանեկան կենցաղի մնացորդներից ազատագրվելու հարցերը (պայքարել չադրաները վերացնելու համար, փակվածություն դեմ և այլն)։

գ) կանանց ներգրավում է խորհրդի հասարակական աշխատանքների մեջ՝ կոոպերատիվների, գյուղողովների, պատգամավորական ժողովների և այլն։

դ) մշակում է կանանց նյութական աջակցություն ցույց տալու ձեռնարկումներ, վորոնք ազատագրման կապակցությամբ դժվարին կացություն մեջ են, նույնպես և ավելի կարիքավոր կանանց ուղարկելով զանազան աշխատանքների, թե տեղավորելով զանազան հիմնարկություններում և ձեռնարկություններում և թե նրանց համար զանազան տեսակի արտեղներ, արհեստանոցներ, լվացքատներ կազմակերպելու միջոցով։

յե) կանանց ցույց է տալիս իրավաբանական ոգնություն և համապատասխան կազմակերպությունների ու հիմնարկությունների միջոցով կազմակերպում է նրանց շահերի պաշտպանությունը դատարաններում։

զ) կոոպերատիվային մարմինների, գյուղացիական փոխօգնություն ընկերությունների միջոցով աջակցում է կանանց աշխատանքների թեթևացմանը կողմնակցելով աշխատանքի ձեռնարկումները յեղանակով և գյուղատնտեսական ու տնայնագործական արտադրության բարելավված ձևերը տարածելու միջոցով։

ե) ձեռնարկումներ է մշակում կանանց՝ մոր, տնտեսուհու կյանքի պայմանները բարելավելու համար—մանկական մսուրներ (яссли), մանկատներ, հասարակական ճաշարաններ և այլն կազմակերպելու միջոցով։

բ) հետևում է վերահսկողություն է սահմանում բոլոր հիմնարկությունների և ձեռնարկությունների վրա, վորոնք զբաղվում են տվյալ խորհրդի տերիտորիայի վրա և աշխատավոր կանանց ու նրանց յերեխաների կարիքները սպասարկելու խընդիրները կատարման և գործունեություն վրա։

թ) կիրառում է կանանց վերաբերյալ որենսդրության հրահրությունը, ժողովրդականացում է աշխատանքային աշխատավորության շարքերում, մասնակցում է դատական, վարչական և սոցիալ-կուլտուրական մարմինների աշխատանքներին, ինչպես նրանց հետադոտման յեղանակով, նույնպես և իր անդամներին ամբացման միջոցով։

ժ) առաջադրում է աշխատավորուհիների և գեղջկուհիների

թեկնածությունը խորհուրդների միջոցով, խորհուրդներում և գործկոմներում ղեկավար աշխատանքներ տանելու համար և աջակցություն է ցույց տալիս նրանց առուրյա աշխատանքներին։

ի) աջակցում է առողջապահության մարմիններին, բժշկական հիմնարկությունների, մանկաբարձական կայանների ցանցի լայնացմանը և հիվանդանոցներում ծննդկանների մասնակալների քանակի ավելացմանը։ աջակցում է դրանց ժողովրդականացմանը մասսաների շարքերում, նույնպես և սանիտարա-առողջապահական գիտելիքների տարածմանը իր ռալոնի կանանց մեջ։

լ) աջակցում է լուսավորության մարմիններին դպրոցական հասակ ունեցող աղջկերանց դպրոցները ներգրավելու գործին, աջակցում է խրճիթ-ընթերցարաններին կից գեղջկուհիների անկյուններ, լիկկայաններ և նրանց համար դասախոսություններ, գրույցներ կազմակերպելու գործին։

27. Բ.-Գ. Տ. (ՔՌՈ) սեկցիան իր առաջ խնդիր է դնում պայքարել բուրժուարտիզմի, քաջքումների, գործին անտարբեր վերաբերելու, անտնտեսավորության դեմ և այլն։

Բ.-Գ. Տ. սեկցիալի անելիքները.

ա) սահմանում է գյուղխորհրդի և վերադաս գործադիր կոմիտեների վորոշումները կյանքում կիրառելու վերահսկողությունը։

բ) ընդունում և քննում է ազջարնակչության բողոքները (գրավոր և բանավոր) տեղական պետական, կոոպերատիվային և այլ կազմակերպությունների աշխատանքների թերությունների և առանձին պաշտոնյաների ապօրինի գործողությունների վերաբերմամբ։

գ) ընդունում և ըստ պատկանելույն ուղարկում է ազգաբնակչությունից ստացված բողոքները (գրավոր և բանավոր) հիմնարկությունների, կազմակերպությունների աշխատանքների թերությունների վերաբերյալ՝ ռալոնական, շրջանային և հանրապետական մասշտաբով։

դ) հետադոտում է կոոպերատիվ կազմակերպությունների, խորհրդային և կողմնակց տնտեսությունների, գյուղատնտեսական արտեղների և ընկերությունների, հասարակական և պետական կազմակերպությունների աշխատանքները։

յե) իր աշխատանքների մեջ է ներգրավում գյուղթղթակիցներին, բանթղթակիցներին և թույլ չի տալիս վորեկ հալածանք նրանց նկատմամբ՝ մերկացման նյութեր հրապարակելու (опубликовать) համար։



դ) մասնակցութիւնն է ունենում վերադաս Բ.-Գ. Տ. մարմինների հետազոտական աշխատանքների մեջ.

ե) անմիջական կապ է հաստատում ռադիոթմաններին կից Բ.-Գ. Տ. սեկցիաների և Բ.-Գ. Տ. շրջանային մարմինների հետ՝ ուղարկելով նրանց իր նիստերի արձանագրութիւնները, ինֆորմացիոն տեղեկութիւններ իր աշխատանքի մասին և ուրիշ նյութեր:

Վ.

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ԿԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄՁՏԱՍԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

1. Աշխատավորութիւնը գյուղական խորհուրդների գործնական աշխատանքների մեջ—պետապահութիւնի հարցերի վերաբերյալ ներգրավելու նպատակով՝ և պետական ապահովագրութիւնի մարմինների ու գյուղացիութիւնի լայն մասսաների միջև ավելի սերտ կապ ստեղծելու համար՝ գյուղխորհուրդներին կից կազմվում են ապահովագրութիւնի մշտական հանձնաժողովներ:

Ծանոթութիւն. Տեղական պայմանների համեմատ ապահովագրութիւնի մշտական հանձնաժողովների փոխարեն՝ թույլատրվում է ունենալ ապահովագրութիւնի առանձին լիազոր:

2. Ապահովագրութիւնի մշտական հանձնաժողովի անձնական կազմը, վորը բաղկացած պիտի լինի 3—5 հոգուց, հաստատվում է գյուղխորհրդի կողմից:

3. Գյուղխորհրդին կից ապահովագրութիւնի մշտական հանձնաժողովի նախագահը հանդիսանում է գյուղխորհրդի անդամներից մեկը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Ապահովագրութիւնի մշտական հանձնաժողովի կազմի մեջ մտնում են՝ ա) գյուղական խորհրդի անդամները, բ) գյուղական ռեզիդենտները հանձնաժողովների անդամները, գ) գյուղացիները և գեղջիկուհիները, բատրակները և բատրակուհիները, վորոնք իրենց ցույց են տվել հասարակական և խորհրդային աշխա-

տանքների մեջ, դ) Աղրկումկուսի (բ) և ՀԼԿՅԵՄ բջիջների անդամները, զ) արհեստակցական միութիւն տեղական բաժանմունքի ներկայացուցիչները, լե) գյուղական փոխգլխների անդամները, զ) կանանց պատգամավորական ժողովների պատգավորակուհիները:

5. Ապահովագրութիւնի մշտական հանձնաժողովի գործունեութիւնի ընդհանուր ղեկավարութիւնը մտնում է գյուղական խորհրդի պարտականութիւնների մեջ:

6. Նիստերի արձանագրութիւնների կազմելը և ապահովագրութիւնի հանձնաժողովի անդամների հաշվետուութիւն տանելու աշխատանքները ղրվում է քարտուղարի վրա, վորը պիտի ընտրված լինի հանձնաժողովի անդամներից: Քարտուղարի վրա ղրվում է նույնպէս հանձնաժողովի անդամները կանոնավոր կերպով նիստերին հաճախելու և հանձնարարութիւնները կատարելու վրա հսկելու պարտականութիւնները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Ապահովագրութիւնի հանձնաժողովի ամեն մի անդամ պարտավոր է կանոնավոր հաճախելու բոլոր նիստերը և կանոնավոր կերպով կատարելու բոլոր հանձնարարութիւնները: Վորոնք ղրվում են նրա վրա, ինչպէս ամբողջ հանձնաժողովի, նույնպէս և նրա նախագահի կողմից:

8. Հանձնաժողովի անդամը յերեք անգամ իրար վրա նիստերին առանց հարգելի պատճառների չհաճախելու, նույնպէս և իրեն վրա ղրված հանձնարարութիւնները չկատարելու համար հեռացնվում է հանձնաժողովի կազմից:

9. Ապահովագրութիւնի հանձնաժողովների աշխատանքները, վորոնք գյուղխորհրդի անդամ չեն հանդիսանում, կարող են ներկա լինել գյուղական խորհրդի բոլոր նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

10. Ապահովագրութիւնի հանձնաժողովի նախագահը, քարտուղարը և անդամները հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար վոչ մի վարձատրութիւն չեն ստանում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ

10. Ապահովագրութիւնի մշտական հանձնաժողովների նիստերի ժամկետները և աշխատանքների կարգը վորոշում է հանձնաժողովի ընդհանուր ժողովը և հաստատում է գյուղական խոր-

հուրդը: Հանձնաժողովի նիստերը պիտի հրավիրվեն առնվազը ամիսը մեկ անգամ և հրավիրում ե այն գյուղխորհրդի նախագահը, վորին կից գտնվում ե հանձնաժողովը:

Հանձնաժողովի նիստերում բոլոր հարցերը լուծվում են հասարակ ձայների մեծամասնությամբ:

Ծանոթություն. Հանձնաժողովի նիստերը համարվում են կայացած անդամների կիսից ավելին ներկա լինելու դեպքում:

12. Ապահովագրության հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում հրապարակորեն և խորհրդակցական ձայնի իրավունքով. այդ նիստերին կարող են մասնակցեն բոլոր քաղաքացիները, վորոնք ոգտվում են ընտրական ձայնի իրավունքներով:

13. Ապահովագրության մշտական հանձնաժողովի ամեն մի նիստի համար կազմվում ե առանձին արձանագրություն, վորի մեջ մտցրվում ե հանձնաժողովի բոլոր վորոշումները: Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը:

14. Ապահովագրության մշտական հանձնաժողովը գյուղխորհրդի մյուս սեկցիաների աշխատանքների հետ կապ ունեցող հարցեր մշակելու դեպքերում, ապահովագրության հանձնաժողովի կամ այն սեկցիայի, վորի կոմպետենցիայի մեջ մտնում են մշակվելիք հարցերը—առաջարկությամբ հրավիրվում ե ապահովագրության հանձնաժողովի համապատասխան սեկցիայի միացյալ նիստը—համապատասխան գյուղխորհրդի կողմից:

15. Ապահովագրության մշտական հանձնաժողովի մշակած բոլոր ձեռնարկումները և ընդունած վորոշումները հաստատում ե գյուղական խորհուրդը և ինքն ել կշանքում անց ե կաց նում այդպիսիները, յեթե չի պահանջվում դրանց հաստատումը ապահովագրության մարմինների կողմից:

16. Ապահովագրության մշտական հանձնաժողովը մշակում ե իր աշխատանքների նախնական պլանը, վորը հաստատում ե գյուղական խորհուրդը:

17. Ապահովագրության մշտական հանձնաժողովը պարբերաբար, առնվազն չերեք ամիսը մեկ անգամ, իր ղեկավարումներն ե դնում և հաշվետվություն ե ներկայացնում այն խորհրդին, վորի կից գտնվում ե ինքը հանձնաժողովը:

18. Ապահովագրության մշտական հանձնաժողովը տեխնիկական ապարատ չունի և իր աշխատանքների ընթացքում ոգտվում ե գյուղխորհրդի ապարատից:

19. Ապահովագրության մշտական հանձնաժողովը իրավունք չունի խառնվելու, ինչպես գյուղխորհրդի, նույնպես և պետական ապահովագրության գործակալի (агент) անմիջական աշխատանքների մեջ:

20. Մշտական հանձնաժողովի վերաքննման լենթակա հարցերը նրա նիստերի որակարգի մեջ մտցնում են հանձնաժողովի նախագահը կամ անդամները, նույնպես և գյուղական խորհրդի կամ ապահովագրության գործակալի առաջարկությամբ:

Ձեկուցումներ պատրաստելը նախագահը դնում ե հանձնաժողովի անդամների վրա:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

21. Ապահովագրության հանձնաժողովի մշտական անելիքների մեջ մտնում են՝

ա) մշակում են ձեռնարկումներ, վորոնք նպաստում են բոլոր տեսակի պետական ապահովագրությանը տվյալ ռայոնում կամ առանձին գյուղերում:

բ) գյուղխորհրդի նիստերին մտցնում ե ամեն տեսակի առաջարկություններ և նախագծեր՝ գյուղական ապահովագրության վերաբերյալ:

գ) այս կամ այն տեսակի ապահովագրություն անցկացնելու ցանկալիության քննարկությունը, նույնպես և ապահովագրության նորմաների չափերի ապահովումը և ժամկետներին պարտադիր դրույթային վճարումները ժամանակին մտցնելը:

դ) այն հարցերի քննարկումը, վորոնք կապված են ապահովագրության վճարումների և նրանց ապառիկների հավաքման աշակցելու համար ձեռք առած միջոցների հետ:

յե) աշակցում ե ապահովագրության մարմիններին ազգաբնակչությանը ապահովագրության դրույթների վերաբերյալ արտոնություններ բաշխելու հարցում, առանձին հարկատուների միջև, նույնպես ապահովագրության դեպքերը լիկվիդացիայի լենթարկելու հարցում:

զ) միջոցներ ե ձեռք առնում գյուղում ապահովագրության բոլոր տեսակները տարածելու համար, մասնավորապես կառուցվածքների, յեղջուրավոր անասունների, ձիաների, ցանքսերի և գյուղացիական շարժական կալքի:

ե) աշակցում ե պետապահովագրության մարմիններին գյուղացիների կշանքի հասարակ ձեով ապահովագրմանը:

ը) ուսումնասիրում է իր գերատեսչության վայրերում ա-
նասունների մահացության դեմ պայքարելու միջոցներն ու ձե-
վերը:

թ) հսկում է անասունների վարակիչ հիվանդությունների
դեմ պայքարելու համար ձեռք տաժ անասնաբուժական սանի-
տարական միջոցների կիրառման վրա. հսկում է անասունների
կանխարգելիչ պատվաստումներ անցկացնելու և անասունների
համար գերեզմանատեղ հատկացնելու վրա.

ժ) աջակցում է խրճիթ-ընթերցարաններին կից ապահո-
վագրության անկուղանների կազմակերպմանը և համապատասխան
գրականություն մատակարարմանը.

ի) տեղերում ազգաբնակչությանը բացատրում է և ծանո-
թացնում պետական ապահովագրության վերաբերյալ գործող ո-
րենսդրության և կանոնների հետ.

յ) նախորոք քննում և քննարկում է այն բոլոր հարցերը,
նույնպես և զեկուցումները, հաշվետվութունները և նախագը-
ծերը, վորոնք վերաբերում են պետական ապահովագրությանը,
վորոնք ռայոնական գործադիր կոմիտեն և գյուղխորհուրդը ներ-
կայացնում են վերադաս մարմինների քննարկությանը, նույն-
պես և լսում ու քննարկում է ապահովագրության տեղական
գործակալի զեկուցումները և հաշվետվութունները:

VI.

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ—ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱ- ԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ընտրողների հետ կապը բարելավելու նպատակով՝ գյու-
ղական խորհրդի նախագահության պլենումի սեկցիաների նիս-
տերին նախորոք քննարկել այն բոլոր հարցերը, վորոնք չեն-
թակա են ընդհանուր ժողովի քննարկությանը, վորտեղ չկան
գյուղխորհուրդներ, կազմակերպվում է միացյալ խորհրդի ան-
դամների պատգամավորական խմբակներ:

Մանրորւթյուն. Խոր գյուղերում, ընտրողների խո-
շոր թվով, պատգամավորական խմբակներ կարելի է կազ-
մակերպել ըստ առանձին ընտրական շրջանների կամ
կվարտալների:

2. Պատգամավորական խմբակները կազմակերպվում են
գյուղխորհրդի անդամներից և թեկնածուներից, սեկցիայի ան-
դամներից, գյուղացիներից, գեղջկուհիներից, բատրակներից,

բատրակուհիներից, կանանց պատգամավորական ժողովների պատ-
վիրակուհիներից, Աղբիւմկուսի (բ), ՀԼԿԵՄ բջիջների անդամնե-
րից և այն քաղաքացիներից, վորոնք գրկված են ընտրական ձա-
նի իրավունքից և իրենց հայտնաբերել են հասարակա-
տանքների ասպարիզում:

Խմբակի բոլոր անդամներն ոգտվում են վճռական ձայնի
իրավունքով:

3. Պատգամավորական խմբակների աշխատանքները դե-
կավարելու համար ընտրվում է խորհրդի լիազորների անդամնե-
րից մեկը:

Մանրորւթյուն. Այն գյուղերում, վորտեղ գյուղխոր-
հրդի անդամների և թեկնածուների թիվը 10-ից պակաս
է լինում, կարելի է կազմակերպել պատգամավորական
խմբակների բյուրո 3 հոգուց բաղկացած, վորը հաստատ
վում է գյուղխորհրդի կողմից:

4. Պատգամավորական խմբակները կազմակերպվում են
այնքան ժամանակով, վորքան ժամանակով գյուղական խոր-
հուրդը:

5. Խմբակների վրա դրվում են հետևյալ պարտականու-
թյունները՝

ա) հաշվետուում է տանում բնակելի վայրերի կամ շրջանի
պատգամավորական խմբակի անդամների.

բ) բաժանում է խմբակի միջև աշխատանքները (առանձին
հանձնարարութուններ, առաջադրութուններ և տալիս անդամ-
ներին).

գ) աջակցում է գյուղական խորհրդին բարելավել մաս-
սայական աշխատանքների գրվածքը գյուղում կամ շրջա-
նում

դ) հաշվի է առնում ընտրողների կողմից արված գործնա-
կան առաջարկները և այդպիսիները գրվում են գյուղական խոր-
հրդի և սեկցիայի նիստերին.

յե) գյուղխորհրդի սեկցիայի նիստերին է դնում իրենց
պատգամավորների նախաձեռնությամբ առաջադրած հարցերը.

զ) հսկում է սեկցիայի անդամների վրա դրված պարտակա-
նո թյունները կատարելու և նրանց աշխատանքի հաշվետվու-
թյան հաշվետուման վրա.

է) պատրաստում և մասնակցում է ինչպես գյուղական խոր
հրդի հաշվետվութունների, նրա աշխատանքների, նույնպես և
խմբակի առանձին անդամների աշխատանքներին.

ը) ընդունում ե ընտրողների ինչպես բանավոր, նույնպես և գրավոր բողոքները և հավաքում ե ընտրողների կարծիքն խորհրդի առանձին հարցերի վերաբերյալ:

թ) իր նիստերում մշակում ե գյուղխորհրդի առաջարկած կամ իր սեփական նախաձեռնությամբ բոլոր հարցերը, վորոնք մշտնում են գյուղական խորհրդի անելիքների մեջ:

6. Խմբակի լիազորը կամ բյուրոն, վորտեղ աշխատին կազմակերպված ե, պարբերաբար ստուգում ե կատարում սեկցիաներում և գյուղխորհրդում առաջարկների անցկացնելու և կատարելու վերաբերյալ:

7. Պատգամավորական խմբակը կամ նրա առանձին անդամները վոչ մի վարչական կամ անտեսական իրավունք չունեն և իրենց բոլոր ձեռնարկումները անց են կացնում գյուղական խորհրդի միջոցով:

8. Իր խնդիրներն իրագործելու և առանձին հարցեր լուծելու համար, լիազորը (կամ բյուրոն) ամիսը մեկ անգամից վոչ պակաս — գյուղխորհրդին իրազեկ դարձնելով — հրավիրում ե նիստ:

9. Ամեն մի նիստի համար կազմվում ե արձանագրություն, բոլոր վորոշումները ընդունվում են հասարակ ձայների մեծամասնությամբ:

10. Պատգամավորական խմբակների նիստերը պեղի են ունենում հրապարակորեն և այդ նիստերին իրավունք ունեն ներկա լինելու բոլոր քաղաքացիները, վորոնք ոգտվում են ընտրական ձայնի իրավունքով:

11. Խմբակի ամեն մի անդամ պարտավոր ե՝

ա) հաճախել խմբակի նիստերը:

բ) աջակցել կյանքում անցկացնել այն բոլոր վորոշումները վորոնք հաստատված են գյուղխորհրդի կողմից:

գ) կատարել իրեն վրա դրված բոլոր հանձնարարությունները և առանձին խնդիրները:

դ) ընդունել ընտրողների ամեն մի տեսակ բողոք ու դիմում և հայտնել խմբակի լիազորին կամ բյուրոյին:

12. Խմբակի աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը իրագործվում ե գյուղխորհրդի կողմի, խմբակների կամ լիազորների կանոնավոր խորհրդակցություններ հրավիրելու միջոցով կամ թե գյուղխորհրդի նիստերում լսելով նրանց զեկուցումներն իրենց կատարած աշխատանքների մասին:

VII.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՍԱՍԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Գյուղի կյանքին վերաբերող հարցերը քննարկելու և վերանայելու համար, նույնպես և պետական, շրջանային, աշխտական նշանակություն ունեցող ընդհանուր հարցերը քննարկելու համար հրավիրվում ե քաղաքացիների ընդհանուր ժողով:

2. Քաղաքացիների ընդհանուր ժողովներին կարող են ներկա լինել այն բոլոր քաղաքացիները, վորոնք Ա. Ս. Խ. Հ. Սահմանադրության հիման վրա ոգտվում են ընտրական ձայնի իրավունքներով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐ ՆՐԱՎԻՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Քաղաքացիների ընդհանուր ժողովները հրավիրվում են խորհրդի կամ գյուղական խորհրդի լիազորի կողմից՝ խորհրդի հանձնարարությամբ՝ կարիք լինելու դեպքում, բայց վոչ ուշ, քան շաբաթը մեկ անգամ:

Ծանոթություն. 1. Խոշոր գյուղերում ընդհանուր ժողովները կարող են հրավիրվել նույն մարմինների կողմից՝ ըստ գյուղի առանձին աշխտի կամ թաղամասի:

Ծանոթություն 2. Այն դեպքերում, չերը գյուղական խորհուրդը քաղաքացիների ընդհանուր ժողովում այնպիսի հարցեր ե դնում, վորոնք վերաբերվում են մի քանի գյուղերի՝ միացրված տվյալ խորհրդով՝ կարելի չե հրավիրել այդ բոլոր գյուղերի քաղաքացիների ընդհանուր ժողովը:

4. Քաղաքացիների ընդհանուր ժողով կարելի չե հրավիրել նույնպես և տվյալ գյուղի քաղաքացիների — վորոնք իրավունք ունեն մասնակցել ու ժողովին — մեկ հինգերորդի պահանջով: Քաղաքացիների կողմից ընդհանուր ժողով հրավիրելու մասին դիմում տալու դեպքում պետք ե ցույց տրված լինեն այն հարցերը, վորոնք առաջարկվում են քննարկել ընդհանուր ժողովում:

Բացի այդ՝ քաղաքացիներին ընդհանուր ժողով կարելի չէ հրավիրել գյուղական ռեվիզիոն հանձնաժողովի պահանջով:

5. Քաղաքացիներին ընդհանուր ժողով հրավիրելու ժամանակի և տեղի մասին, նույնպես և այն հարցերի մասին, վերոնշյալ պետք է քննարկվեն այդ ժողովում, գյուղի քաղաքացիներին նախորդ անպայման հայտնում և ժողովի մասին, գյուղխորհուրդը կամ նրա լիազորը, նույնպես և աչքի ընկնող տեղերում համապատասխան հայտարարություններ կայցնելու միջոցով:

Ծանոթություն 1. Առանձին շտապ դեպքում քաղաքացիներին ընդհանուր ժողով կարող են հրավիրել այն մարմինները, վոր ցույց է տրված 3-րդ հոդվածում, առանց նախորդ հրապարակելու (опубликовании) ընդհանուր որակարգը:

Ծանոթություն 2. Քաղաքացիներին ընդհանուր ժողովում իրավունք է տրվում գյուղխորհրդի կամ ներկայացուցչի առաջարկած որակարգն ընդհանուր ժողովի համար փոփոխել կամ լրացնել:

6. Քաղաքացիներին ընդհանուր ժողովն իրավասու է համարվում, յեթե տվյալ գյուղի կամ ուղու տեղիտորիայի քաղաքացիներին 35%, վորոնք ոգտվում են ընտրական ձայնի իրավունքով, ներկա են ժողովին:

Ծանոթություն. Ընտրական ժողովները, վորոնք հրավիրվում են բացառապես գյուղխորհրդի, գյուղական ռեվիզիոն հանձնաժողովների ընտրությունների համար, ժողովը իրավասու է համարվում քաղաքացիներին այն քանակի ներկա լինելու դեպքում, վորպիսի քանակը սահմանված է Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության կողմից հատուկ հրահանգով — ընտրությունների մասին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՐԳԸ

7. Քաղաքացիներին ընդհանուր ժողովը բաց է անում գյուղխորհրդի նախագահը կամ այն անձը, վորը դրա համար լիազորված է գյուղխորհրդի կողմից:

8. Հաշվեառում է տարվում քաղաքացիներին ընդհանուր ժողովին ներկայացող բոլոր քաղաքացիներին:

9. Քաղաքացիներին ընդհանուր ժողովը բանալուց հետո՝ ընտրվում է նախագահություն, յերեք հոգուց բաղկացած, վորոնց թվում նաև քարտուղարը:

10. Քաղաքացիներին ընդհանուր ժողովի մասին կազմվում է արձանագրություն, վորը ստորագրում են — ժողովի նախագահը, պրեզիդիումի անդամը և քարտուղարը:

11. Քաղաքացիներին ընդհանուր ժողովում հարցերը լուծվում են, քվեարկությամբ ձայների մեծամասնությամբ:

12. Քաղաքացիներին ընդհանուր ժողովում քննարկվելիք հարցերի համար զեկուցողները առաջադրում է գյուղխորհուրդը. զեկուցողը այդ հարցերի վերաբերյալ մշակում է համապատասխան վորոշումների նախագծեր՝ ընդհանուր ժողովում քննարկելու համար:

Ծանոթություն. Քաղաքացիներին ընդհանուր ժողովի քննարկությունը կարող են մտցնել ժողովին մասնակցողները, նաև ուրիշ վորոշումների նախագծեր, բացի այն նախագծերից, վորոնք մտցնում է գյուղխորհուրդը կամ նրա ներկայացուցիչը:

13. Քաղաքացիներին ընդհանուր ժողովին մասնակցողները, վորոնք համաձայն չեն քաղաքացիներին ընդհանուր ժողովի վորոշումների հետ, կարող են արձանագրությանը կցել իրենց հատուկ կարծիքը, մատնանշելով այն պատճառները, վորոնց հիման վրա քաղաքացիներին ընդհանուր ժողովի վորոշումը գնահատում են սխալ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

14. Քաղաքացիներին ընդհանուր ժողովի արձանագրությունը հանձնվում է ի հաստատումն գյուղխորհրդի, վորը կյանքում անց է կացնում ընդհանուր ժողովի վորոշումները: Այն դեպքերում, յերբ գյուղխորհուրդն ընդհանուր ժողովների վորոշումը գտնում է ապրիինի կամ անպատակահարմար, նա կանգնեցնում է ալդալիսին և այդ դեպքում ամբողջ հարցը հանձնում է ուսունական գործադիր կոմիտեին՝ հարցը վերջնականապես լուծելու համար:

15. Ընդհանուր ժողովի նախորդ վորոշումները կատարելու մասին — գյուղխորհուրդը հայտնում է քաղաքացիներին մոտակա ընդհանուր ժողովին ի գիտություն:

VIII.

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ԿԻՑ ՌԵՎԻԶԻՈՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Գյուղխորհրդների ֆինանսա-տնտեսական գործունեությունը վրա հասարակական կոնտրոլ ունենալու նպատակով՝ այդ պիսիներին կից կազմակերպվում են ռեվիզիոն հանձնաժողովներ:
2. Ռեվիզիոն հանձնաժողովը ընտրվում է ընտրող քաղաքացիների ընդհանուր ժողովը գյուղխորհուրդների ընտրությունների ժամանակ այն կարգով, ինչ կարգ վոր սահմանվում է գյուղխորհուրդների ընտրությունների համար:
3. Ռեվիզիոն հանձնաժողովը ընտրվում է այն ժամանակամիջոցի համար, վորքան ժամանակով գյուղխորհուրդը, և պետք է բաղկացած լինի 3 անդամից և 2 թեկնածուից:
4. Ռեվիզիոն հանձնաժողովը ընտրվում է մշտական նախագահ և քարտուղար:
5. Ռեվիզիոն հանձնաժողովը հատուկ տեխնիկական ապարատ չի ունենում և անհրաժեշտության դեպքում իր աշխատանքների ընթացքում ոգտվում է գյուղխորհրդի ապակարատից:
6. Գյուղխորհրդի ռեվիզիոն հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել ամեն մի քաղաքացի, ով վոր ոգտվում է ընտրական ձայնի իրավունքով:

Ծանոթություն. Գյուղական ռեվիզիոն հանձնաժողովի անդամ չեն կարող ընտրվել՝ ա) համապատասխան գյուղխորհրդի անդամները և թեկնածուները, բ) այն հիմնարկությունների աշխատակիցները, վորոնք չենթակա են ռեվիզիայի, գ) գյուղխորհրդի վորեն անդամների ա-մուսինները, չեղբայրները, տղաները, աղջիկները, դ) գյուղխորհրդների տեխնիկական աշխատակիցները և հո-ղային համայնքների լիազորները:

7. Ռեվիզիոն հանձնաժողովի անդամները կարող են հե-ռացնվել իրենց աշխատանքներից ընտրողների ընդհանուր ժո-ղովի վորոշմամբ. իսկ մինչև այդ հրավերին շրջանային գործա-ղիք կոմիտեի վորոշմամբ՝ ռայոնական գործաղիք կոմիտեի տը-ված տեղեկություն հիման վրա, ա) իրենց պարտականություն-

ներին անփուլթ վերաբերվելու դեպքերում, բ) ռեվիզիայի ժա-մանակ չարարկումներ (злоупотребление) թույլ տալու դեպքե-րում:

Ծանոթություն. Ռեվիզիոն հանձնաժողովի հեռացը-ված անդամին փոխարինում է թեկնածուն:

8. Ռեվիզիոն հանձնաժողովի անդամներն իրենց աշխա-տանքների համար վոչ մի վարձատրություն չեն ստանում:

9. Ռեվիզիոն հանձնաժողովի անելիքները՝ ա) ստուգում է մուծումների ճշտությունը ու պահպանումը և դրամական միջոց-ների ծախսումները, նույնպես և հսկում է գյուղխորհրդի գույ-քի (հրեհային գումակի, հասարակական, գյուղատնտեսական գործիքների, խրճիթ-ընթերցարանի, ինվենտարի և այլն) նպա-տակահարմար և կանոնավոր ձևով ոգտագործման և պահպանման վրա, բ) ստուգում է գյուղխորհրդի հսկողություն տակ գտնվող ձեռնարկությունների, (ջրաղացների, արհեստանոցների) ֆինան-սա-տնտեսական գործունեությունը և նրանց դրամական ու մա-տերիալ հաշվետվությունները, գ) ստուգում է գյուղխորհրդի հա-կողություն տակ գտնվող ձեռնարկությունների գործունեությու-նը, նույնպես և պարզում է գործի դրվածքն այդ ձեռնար-կություններում և ցույց է տալիս, թե ինչ միջոցներ պիտի ձեռք առնել գործը բարելավելու համար, դ) ստուգում է ամեն մի տեսակի կամավոր նվիրատվությունների կատարման ճշտու-թյունը, վորոնք կատարվում են սահմանված կարգով ու այդ չե-ղանակով հավաքած գումարների ծախսումները և այդ բոլորի մասին ղեկուցում է ընդհանուր ժողովում, յե) ստուգում է գյուղ խորհրդի հանձնաժողովների աշխատանքները, նույնպես և հողա-յին համայնքների ֆինանսա-տնտեսական գործունեությունը այնտեղ, վորտեղ այդպիսիները մտնում են գյուղխորհրդի ռայո-նի մեջ, զ) ստուգում է ֆինանսա-տնտեսական գործունեությու-նը այն հիմնարկների, վորոնք պահվում են գյուղական բյուջեով, վորտեղ այդպիսի բյուջե մտցրված է, նույնպես և այն հիմնարկների, վորոնք պահվում են ուրիշ գործաղիք կոմի-տեների բյուջեով՝ նրանց հանձնարարությունները, ե) ստուգում է ապահովագրության վճարումները հավաքողի աշխատանքները, չիրը նեգոնիմչիկներից բռնություններ են գանձվում այդպիսիները և արդյունքների մասին հայտնում է ապահովագրության գործա-կալին (агент):

10. Վատնումներ հայտնաբերելու դեպքում, ապրիլի և անկարգ ծախսումներ կամ այլ չարարկումներ նկատելու ժամանակ, ռեվիզիոն հանձնաժողովը դրա մասին անմիջապես հայտնում է

առաջնական գործկոմիին կամ գյուղխորհրդին, նույնպես և զեկուցում է քաղաքացիների մոտակա ընդհանուր ժողովում:

11. Հերթական ռեվիզիաները գյուղական ռեվիզիոն հանձնաժողովները կատարում են վոչ ուշ քան չերեք ամիսը մեկ անգամ (ըստ կվարտալների). արտակարգ (экстренные) ռեվիզիաները կատարվում են ինչպես հանձնաժողովի իրեն ձեռնարկելու թյամբ (инициатива), նույնպես և վերադաս գործադիր կոմիտեների առաջարկությամբ:

12. Գյուղխորհրդի գործունեությունից ստուգումն այն կարգով, ինչ կարգ ցույց է տրված նախորդ հոդվածներում, պարտադիր է հանդիսանում մի ամիս առաջ՝ մինչև գյուղխորհրդի վերընտրությունը: Նոր ընտրված ռեվիզիոն հանձնաժողովը պարտավոր է ներկա լինել գործերը, դրամական գումարները և ձեռնարկությունները նոր գյուղխորհուրդի հնից ընդունելու ժամանակ:

13. Գյուղական ռեվիզիոն հանձնաժողովն իր աշխատանքների մասին ամեն զեպքում զեկուցում է քաղաքացիների ընդհանուր ժողովներում, չեր գյուղխորհուրդի զեկուցում է իր գործունեությունից մասին:

Ծանոթություն. Այն հիմնարկությունների ռեվիզիայի արդյունքները, վորը չի գտնվում գյուղխորհրդի հսկողությունից տակ (տես. հոդ. 9), հայտնում է դայրա-գործադիր կոմիտեին, իսկ հարկավոր զեպքում այն գործկոմներին, վորոնց հանձնարարությամբ կատարվել է ռեվիզիան:

14. Ռեվիզիոն հանձնաժողովն ամեն անգամ ռեվիզիա անելիս պարտավոր է կազմել չերեք որինակ զրավոր ակտ: Ակտում անհրաժեշտ է, վորքան հնարավոր է մանրամասնորեն մատնանընել, ինչ է ստուգվել, զրա արդյունքները և ինչ է հանձնարարում հանձնաժողովը նկատած թերությունները վերացնելու համար:

15. Ակտը պիտի ստորագրեն ռեվիզիային մասնակցողները: Յեթե ռեվիզիոն հանձնաժողովի անդամներից կամ ներկա չեղողներից վորեկ մեկը համաձայն չէ ակտի կետերի հետ, նրան իրավունք է տրվում 3 օրվա ընթացքում նույն ակտի մեջ արձանագրել իր հատուկ կարծիքը:

Ծանոթություն. Յեթե ռեվիզիայի չենթարկվող հիմնարկության կամ ձեռնարկության վարիչը կամ նրա փոխարինողը ներկա չենելու հնարավորություն չունի, այդ զեպքում ռեվիզիան կատարվում է չերկու վկայի (понятые) ներկայությամբ:

16. Ակտի մի որինակը մնում է ռեվիզիոն հանձնաժողովի գործերի մեջ, մյուսը գյուղխորհրդի, իսկ չերրորդը ուղարկվում է առաջնական գործադիր կոմիտեին:

17. Վերադաս ռեվիզիոն մարմինների կողմից, տվյալ գյուղխորհրդի տեղիտորիայի վրա գտնվող հիմնարկությունը ռեվիզիայի չենթարկելիս, իրենց աշխատանքներին ներգրավում են համապատասխան գյուղական ռեվիզիոն հանձնաժողովների անդամներից մեկին:

18. Գյուղխորհուրդը ռեվիզիոն հանձնաժողովի առաջարկների հետ համաձայն չլինելու զեպքում, տարաձայնությունները լուծում է առաջնական գործադիր կոմիտեն:

19. Ռեվիզիոն հանձնաժողովը ռեվիզիան կատարելիս, այս կամ այն հարցի վերաբերյալ բացատրություն պահանջելու նպատակով կարող է կանչել գյուղական պաշտոնյաներից վորեկ մեկին՝ գյուղխորհրդի բոլոր մատյանները և փաստաթղթերը քննելու համար:

Համապատասխան աշխատանքների ճյուղերը հետադրուելու ժամանակ, ռեվիզիոն հանձնաժողովն իրեն ոգնելու համար կարող է հրավիրել տեղական աշխատակիցներից տեղյակ անձանց՝ բժիշկներ, գյուղատնտեսներ, հաշվապահներ և այլն:

20. Ռեվիզիոն հանձնաժողովի անդամները խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել համապատասխան գյուղխորհրդի և սեկցիաների բոլոր նիստերին:

21. Գյուղական ռեվիզիոն հանձնաժողովի զեկավարությունը և հրահանգավորումը գրվում է առաջնական գործադիր կոմիտեի վրա:

22. Գյուղական խորհուրդը իրավունք չունի խառնվելու հանձնաժողովի գործունեությունից մեջ և վորեկ կարգադրություն անելու:

22. Ռեվիզիոն հանձնաժողովն իրավունք չունի խառնվելու ինչպես գյուղխորհրդի, նույնպես և նրա գերատեսչության տակ գտնվող հիմնարկությունների և ձեռնարկությունների ընթացիկ գործունեությունից մեջ:

IX.

ԻՆՉՊԵՍ ՊԻՏԻ ԱՇԽԱՏԵՆ ՍԵՎՑԻԱՆԵՐԸ

1. Ամեն մի սեկցիա ունենում է իր կվարտալային կամ կիսամյակային աշխատանքների ցուցակը, վորպիսին հանդիսանում է գյուղխորհրդի պլանի մի մասը կամ թե համաձայնեցրված է լինում գյուղխորհրդի հետ:

2. Սեկցիայի բոլոր նիստերը հրավիրվում են ըստ հնարավորութեան որացուցային ձևով՝ նշանակած օրերը և շտապ հարցեր քննարկելու պարագային:

3. Սեկցիայի պլենումի նիստերը հրավիրվում են չերկուշաբաթը մեկ անգամից վոչ պակաս:

4. Սեկցիայի ամեն մի անդամին վորոշակի աշխատանք է տրվում, վորպիսին նա պարտավոր է կատարել:

Ծանոթութուն.— Քարտուղարը կազմում է սեկցիայի այն անդամների ցուցակը, վորոնք իրենց վրա զբաղած պարտականութիւնները չեն կատարում և զրանց մասին զեկուցում է բյուրոյին:

5. Սեկցիայի ամեն մի անդամ պարտավոր է ներկա լինել սեկցիայի բոլոր պլենումներին:

6. Սեկցիայի նիստերին հաճախել չկարողանալու դեպքում, ամեն մի անդամ պարտավոր է հայտնել բյուրոյին վոչ ուշ քան հինգ օրվա ընթացքում: Սեկցիայի նիստերին 3 անգամ առանց հարգելի պատճառների չհաճախելու դեպքում, բյուրոն սեկցիայի կազմբաժնի միջոցով հայտնում է խորհրդին ի գիտութիւն:

7. Սեկցիայի ամեն մի անդամ պարտավոր է ընտրողներին հաշվետուութիւն տալ իր կատարած աշխատանքների մասին և այն բոլոր գործնական առաջարկութիւնները, վորոնք արվում են հաշվետուութեան վերաբերյալ, պիտի ներկայացնել սեկցիայի բյուրոյին:

8. Սեկցիայի առորջա աշխատանքները տանելու, պլենումի վորոշումները կշանքում կիրառելու և առանձին անդամների աշխատանքները ղեկավարելու ու գլուղական խորհրդի նախագահութեան հետ կապ պահելու նպատակով կազմվում է մշտական բյուրո:

9. Կարևորագույն սկզբունքային հարցերը—մինչև կշանքում անցկացնելը—քննարկվում են սեկցիաների պլենումում:

10. Սեկցիաներն իրենց գործնական աշխատանքների մեջ ներգրավում են՝ բանվորների և բանվորուհիների, արհեստակցական կազմակերպութիւնների, Հողանտա Միութեան, ուսուցիչների, բժիշկների և փոխգլխների, և կանանց պատգամավորական ժողովների ներկայացուցիչներին:

11. Սեկցիան հայտնաբերում է ավելի ակտիվ անդամներին և առաջ քաշման կարգով հանձնարարում է նրանց շտա թե քիչ պատասխանատու պաշտոնի համար:

12. Սեկցիայի բյուրոն հիմնարկութիւններում և ձեռնար-

կութիւններում հսկում է առաջ քաշվածների աշխատանքների վրա:

13. Սեկցիայի բյուրոն հավաքում է առաջ քաշվածներին, լսում է նրանց հաշվետուութիւնները հիմնարկութիւններում տալիս աշխատանքների մասին, հսկում է, վորպեսզի առաջ քաշվածները չխզեն իրենց կապերը ընտրողների հետ և սխառմատիկաբար հաշվետուութիւն տան իրենց աշխատանքի մասին:

14. Ամեն մի սեկցիայի բյուրո հաշվետուութիւն է տալիս կատարած աշխատանքների մասին, ինչպես սեկցիայի պլենումին, նույնպես և խորհրդի նախագահութեանը:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Գլուղխորհուրդների սեկցիաների քարտուղարները պետք է իրադեկ լինեն համագումարների և կոնֆերանսների բոլոր վորոշումներին՝ խորհրդային շինարարութեան վերաբերյալ: Պիտի հաճախեն գլուղխորհրդի նախագահութեան բոլոր նիստերին և գլուղխորհրդի պլենումներին. նույնպես և այն բոլոր նիստերին, վորոնք հրավիրում են խորհուրդները սեկցիայի հարցերի վերաբերյալ:

16. Սեկցիաների քարտուղարները տանում են սեկցիայի պլենումների նիստերի բոլոր նախապատրաստական աշխատանքները, նյութեր են պատրաստում (գրականութիւն և այլն) և միաժամանակ հսկում են սեկցիաների պլենումների և նրա մարմինների վորոշումների կատարման վրա:

17. Սեկցիաների քարտուղարները նախապատրաստում են սեկցիաների աշխատանքների պլանը՝ կապելով աղպիսին խորհրդի աշխատանքի պլանի հետ՝ և թերթում լուսաբանում են սեկցիայի աշխատանքները:

18. Գլուղխորհրդի անդամներից առաջադրում են սեկցիայի քարտուղարի պաշտոնի համար:

Ծանոթութուն. Բացառիկ դեպքերում բյուրոյի միջնորդութեամբ թույլատրվում է քարտուղար ընտրել նաև վոչ խորհրդի անդամ:

19. Սեկցիաների քարտուղարները տանում են միայն սեկցիոն աշխատանքներ՝ սեկցիաների բյուրոների և գլուղական խորհրդի նախագահութեան առաջադրութեամբ:

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ ԻՆՁՊԵՍ ՊԻՏԻ ՏԱՆԵՆ ՆԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Առանձին հիմնարկություններ և ձեռնարկություններ, վորոնք գյուղխորհրդի տերերի տրիալի վրա են գտնվում, ինչպես որին նաև խորհրդային տնտեսություններ, վարկային ընկերություններ, կոոպերատիվներ, հողային համայնքներ, փոխողկոմներ, հիվանդանոցներ, դպրոցներ և այլն հետազոտելու նպատակով խորհրդի սեկցիաները ընտրում են հետազոտիչ խմբակներ:

21. Հետազոտիչ խմբակը կազմվում է այն հաշվարկմամբ (расчетом), վորպեսզի նրա մեջ մտնեն այն ընկերները, վորոնք ծանոթ են հետազոտվող միավորի բոլոր ճյուղերի հետ:

22. Հետազոտիչ խմբակը պատասխանատու է հանդիսանում սեկցիայի առաջ իրեն հանձնարարած աշխատանքը ժամանակին և ճշտությամբ կատարելու համար:

23. Հետազոտիչ խմբակի համար սեկցիայի բյուրոն նշանակում է ղեկավար, վորի պարտականությունների մեջ մտնում են.

ա) ղեկավարել խմբակի աշխատանքները հետազոտություններն անցկացնելու համար.

բ) բանակցություններ սկսել հիմնարկության և ուրիշ կազմակերպությունների վարչությունների հետ.

գ) հետազոտման նյութերի ընդհանրացումներ կատարել ու հետազոտիչ խմբակի անդամների ու հետազոտված խմբակի ներկայացուցչի հետ վերջնականապես մշակել այդ նյութերը.

դ) ղեկուցումներ տալ սեկցիային հետազոտման արդյունքների մասին:

24. Հետազոտիչ խմբակը մինչև իր աշխատանքներն սկսելը հրահանգներ է ստանում սեկցիայի բյուրոյից և խորհրդի նախագահությունը մշակում է հետազոտման աշխատանքի պլանը և պարտականությունների բաշխումն կատարում անդամների միջև:

25. Հետազոտիչ խմբակի անդամները հետազոտման յենթակա հիմնարկության վարչության և տեղական հասարակական կազմակերպության հետ միասին լսում են հետազոտիչ խմբակի ղեկավարի ղեկուցումը հետազոտված հիմնարկության ստորակետերայի աշխատանքների մասին:

26. Հետազոտվող հիմնարկության կամ ձեռնարկության վարչությունը պարտավոր է հետազոտիչ խմբակի պահանջով ներկայացնել անհրաժեշտ նյութեր, գործեր, հաշվետվություններ,

գրավոր և բանավոր տեղեկանքներ և տալ անհրաժեշտ բացատրություններ և նյութեր, ինչպես վերադաս հիմնարկություններից, նույնպես և հետազոտող հիմնարկության գերատեսչություն յենթակա հիմնարկից և մյուս բոլոր հիմնարկություններից ու կազմակերպություններից, վորոնք կապ ունեն այդ հիմնարկության հետ:

27. Հետազոտման ժամանակ ստուգում է ընտրողների տրված նախադրերի և նրանց լրացումների, հաշվետու ժողովների առաջարկների և սեկցիայի վորոշումների, վորոնք վերաբերվում են տվյալ հիմնարկության կամ ձեռնարկության կատարման վրա:

28. Հետազոտման ժամանակ վոչ հիմնարկի անդամները և վոչ ելինքը խմբակը—հետազոտվող հիմնարկության վարչության վոչ մի ցուցմունք չեն տալիս:

29. Հետազոտման արդյունքները քննարկվում են խմբակի խորհրդակցությունում, հիմնարկության վարչության և տեղական հասարակական կազմակերպությունների հետ միասին և անհապաղ ներկայացնում են սեկցիայի բյուրոյին և սեկցիայի անունից խորհրդի նախագահությանը կամ պլենումին:



ՀՈՒՇԱԹԵՐԹ

ՀՈՒՇԱԹԵՐԹ

ՀՈՒՇԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային գրադարան



NL0213480

39. 583

122

1929-